

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ԻՐԱՆԻ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

*Վահան Բայրուրդյան
Հայաստան*

Խորհրդային Միության փլուզման հետևանքով նորանկախ պետությունների, այսպես կոչված, «հարավային գոտու» ստեղծումը, որն իր մեջ ընդգրկում էր Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նորաստեղծ հանրապետությունները, լուրջ տեղաշարժեր մտցրեց Իրանի աշխարհաքաղաքական իրողությունների մեջ: Նախ այդ երկրի և Ռուսաստանի միջև գոյանում էր բուֆերային մի գոտի, որի հետևանքով վերանում էին երկու երկրների միջև ցամաքային սահմանները: Դրա կարևորությունն Իրանի համար պայմանավորված էր նրանով, որ առ այսօր նրա քաղաքական էլիտայի մեջ քիչ չէ այն մարդկանց թիվը, որոնց քաղաքական մտածողությունը իներցիայի ուժով այնպիսին է, որ Ռուսաստանն ու Իրանը անկախ ներկա իրողություններից, ավելի շուտ պատմական մրցակիցներ են, քան գործընկերներ: Այդ գործիչները թերահավատ են, որ Ռուսաստանը վերջնականապես հրաժարվել է կայսերապաշտությունից, ամբողջատիրական սկզբունքներից և տարածքային նվաճողականության գրգիռներից¹: Իրանում առկա էին նաև քաղաքական գործիչներ, որոնք ենթադրում էին, որ Խորհրդային Միության փլուզման հետևանքով Անդրկովկասում գոյացել է վակուում, որը լցնելու առաջնության իրավունքն առաջին հերթին պատկանելու է Իրանին²:

Սակայն առաջնորդվելով քաղաքական պրագմատիզմի սկզբունքներով՝ ԻԻՀ կառավարությունը Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի նորանկախ հանրապետությունների նկատմամբ սկսեց վարել վերին աստիճանի զգույշ և հավասարակշռված քաղաքականություն³, միաժամանակ հայտարարելով, որ Իրանը «գիտակցում ու ընկալում է» Ռուսաստանի հատուկ շահերը հիշյալ երկրներում:

Անկասկած, Խորհրդային Միության փլուզումով ոչ միայն վերանում էր վերջին երկու հարյուրամյակների ընթացքում Իրանի անվտանգությանը և տարածքային ամբողջականությանը սպառնացող պետությունը, այլև չքանում էր հյուսիսային հարևանների հետ Իրանի հարաբերությունների հնուց ի վեր գոյություն ունեցող ասիմետրիան⁴: Այլ կերպ ասած՝ հյուսիսում Իրանի համար ստեղծվում էր անվտանգության մի հաստատուն գոտի, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Իրանը, համենայն դեպս այսօր, ավելի հզոր է և ռազմական առումով ավելի ուժեղ Կենտրոնական Ասիայի և Անդրկովկասի հանրապետություններից:

Բոլոր դեպքերում, հանդիսանալով միջինարևելյան աշխարհաքաղաքական միջավայրի նյութական ու մարդկային ռեսուրսներով, արդյունաբերական ներուժով և ռազմական հնարավորություններով առաջատար պետություններից մեկը, ԻԻՀ-ը հնարավորություն ստացավ տարածաշրջանային քաղաքականության բնագավա-

ռում վարելու վերին աստիճանի մեծ լիցք պարունակող, եռանդուն ու գործուն մի քաղաքականություն:

Նշված իրողություններն, անտարակույս, չէին կարող իրենց ուժգին ազդեցությամբ չունենալ իրանցիների ներկա սերնդի աշխարհայացքի և միջազգային հարաբերությունների զարգացման նկատմամբ նրանց հայացքների ձևավորման ընդհանուր գծերի վրա: Օրինակ, մի շարք վերլուծաբաններ նկատել են, որ Խորհրդային Միության փլուզումը նոր մղում հաղորդեց ԻԻՅ պանիրանիստական-ազգայնական մտածողություն ունեցող քաղաքական վերնախավի մի շարք ազդեցիկ ներկայացուցիչների պատվախնդրությանը, որը ոչ միայն երազում էր, այլև գործնականում քայլեր էր ձեռնարկում ԻԻՅ-ը վերածելու տարածաշրջանի ձգողության կենտրոնի: Քաղաքական այդ շրջանակներում կային մարդիկ, որոնք գտնում էին, որ Անդր-կովկասի մի շարք տարածքներ նախկինում գտնվել են Իրանի կազմում և այժմ պետք է «վերադարձվեն»: Սակայն իրանական ղեկավարության մեծագույն ծառայությունն այն է, որ նա տուրք չտվեց այդ տրամադրություններին և նպաստեց այդ վտանգավոր սինդրոմի հաղթահարմանը, որի հետևանքով և Իրանը ընթացավ ժամանակակից աշխարհի իրողությունների հունով:

Ո՞րն էր Հարավային Կովկասի տարածաշրջանում ԻԻՅ գլոբալ քաղաքականության բուն էությունը. մեր կարծիքով՝ տարածաշրջանի երկրները «եվրակենտրոն» կողմնորոշումից դեպի «ասիական կողմնորոշումը» շրջելը: Ընդ որում, այդ նպատակի իրագործման լծակները բազմազան են՝ տնտեսական, քաղաքական և այլն: Այդ գերխնդրի իրագործման համար լայնորեն օգտագործվում էր և ներկայումս էլ օգտագործվում է նաև Իրանի հարուստ մշակութային ժառանգությունը որպես ռազմավարական գործոն: Հայտնի է, որ Անդրկովկասի նորանկախ հանրապետությունները դեռևս հնագույն ժամանակներից սկսած կազմել են այսպես կոչված «իրանական աշխարհի» բաղկացուցիչ մասը, իսկ նրանց բնակիչները դարեր շարունակ դաստիարակվել են իրանական մշակույթի անմիջական ազդեցության ներքո: Պատահական չէ, որ օրինակ, նորանկախ Հայաստանի և Վրաստանի հետ հարաբերություններ իրականացնելիս, նկատի ունենալով նրանց քրիստոնեական արմատները, ԻԻՅ քաղաքական շրջանները ձեռնպահ էին մնում «իսլամական հեղափոխություն» արտահանելու քայլերից և առաջ էին մղում հայ և վրացի ժողովուրդների հետ հոգեկան ու մշակութային հարազատության և պատմականորեն նրանց «միասնական ընտանիքի» պատկանելության վերաբերյալ հայեցակարգը:

Արդ, վերոհիշյալ իրողությունների համատեքստում ո՞րն է Հայաստանի Հանրապետության տեղն ու դերը ԻԻՅ տարածաշրջանային քաղաքականության ոլորտում: Նախ պետք է նշել, որ Հայաստանն ու Իրանը սահմանակից պետություններ են, որը կարևոր գործոն է ոչ միայն առևտրական-տնտեսական հարաբերությունները զարգացնելու, այլև երկկողմանի հուսալի անվտանգությունն ապահովելու բնագավառում: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ նրանց սահմանները խաղաղության ու բարեկամության սահմաններ են: Հենց այդ պատճառով, Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունները հաստատելու օրվանից, Թեհրանը նրա հետ միջպետական հարաբերություններին տվեց առաջնություն և մեծ կարևորություն: Անկախության ձեռք բերումով Հայաստանն Իրանի հետ հայտնվեց նույն տարածաշրջանում և՛ անմիջականորեն ընդգրկվելով տարածաշրջանային քաղաքական կյանքի մեջ, Իրանի համար դարձավ կարևոր քաղաքական գործընկեր:

Անժխտելի է, որ Հայաստանն ու Իրանը ներկա աշխարհի իրողություններում ունեն բազմաթիվ ընդհանուր, այդ թվում նաև ռազմավարական շահեր, առանձին դեպքերում նույնիսկ համանման խնդիրներ, բազմապիսի ընդհանրություններ, պատմական ավանդական կապեր և այլն: Նրանք տարածաշրջանի այն հազվագ-

յուտ պետություններից են, որոնք չունեն տարածքային վեճեր, քաղաքական բնույթի պրոբլեմներ և երկկողմանի հարաբերությունները մթազնող այլ խնդիրներ: Թեհրանում քաջ գիտակցում են նաև, որ Հայաստանը որոշակի դեր ունի տարածաշրջանային քաղաքական կայունության ամրապնդման գործում, առավել ևս Իրանի ազգային անվտանգությունն ապահովելու առումով: Ղարաբաղյան պատերազմից հետո Թեհրանում հստակորեն ձևավորվեց նաև այն գաղափարը, որ Հայաստանը ներկայումս լուրջ ռազմական գործոն է, որն ընդունակ է ապահովել ոչ միայն ներքին կայունություն, այլև տարածաշրջանի արտաքին անվտանգություն:

Իրանի ներկա ղեկավարության համար, որն իր արտաքին քաղաքականության հարցերում կարևորագույն ուղենիշ է ճանաչում «քաղաքակրթությունների երկխոսության» սկզբունքը, ոչ պակաս կարևորություն ունի այն, որ Հայաստանը Իրանի միակ սահմանակից քրիստոնյա պետությունն է: Նրա հետ բարիդրացիական հարաբերությունների զարգացումը կարող է օրինակելի նմուշաձև հանդիսանալ իսլամի և քրիստոնեության խաղաղ գոյակցության ցուցադրման կամ «քաղաքակրթությունների երկխոսության» սկզբունքի կոնկրետ դրսևորման համար՝ փարատելու համար Արևմուտքում լայնորեն տարածված այն տեսակետը, թե իրանական «հեղափոխական բնույթի ֆունդամենտալիզմը» տոգորված է կրոնական այլամեթոդային ու հարձակողական ռեվանշիզմի ոգով:

Պակաս կարևոր չէ նաև Հայաստանի դերակատարությունը Իրանի քաղաքական մեկուսացումը հաղթահարելու գործում: Գաղտնիք չէ, որ ԻԻՅ-ն վարչակարգը համարելով «ահաբեկչական», «ռազմաշունչ ֆունդամենտալիստական» և նրան մեղադրելով «իսլամական հեղափոխությունը» այլ երկրներ արտահանելու հետևողական քաղաքականություն իրականացնելու մեջ, Արևմուտքի երկրները նրան նկատմամբ վարում են քաղաքական մեկուսացման և պատժամիջոցներ իրականացնելու քաղաքականություն: Այդ պարագաներում Իրանի առջև դրված կարևորագույն խնդիրն է երկիրը դուրս բերել մեկուսացումից և այն համաշխարհային հանրությանը ներկայացնել որպես վստահելի գործընկեր: Անկասկած, այդ գործում ևս Հայաստանը Իրանի համար ունի խիստ կարևոր նշանակություն:

Հայաստանի Հանրապետության նպաստավոր աշխարհագրական դիրքը, այսինքն այն հանգամանքը, որ նա գտնվում է Կովկասի, Սևծովյան ավազանի և Մերձավոր ու Միջին Արևելքի խաչմերուկում և ունի ճյուղավորված կապեր ԱՊՀ երկրների և մասնավորապես Ռուսաստանի հետ, չափազանց արժեքավորում է նրա նշանակությունը՝ որպես տարածաշրջանային համագործակցության կարևորագույն հանգույցի: Իրանի կողմից Հայաստանը դիտվում է որպես մի տարածք, որի վրայով նա կարող է դուրս գալ դեպի սևծովյան նավահանգիստները, իսկ այնուհետև Եվրոպա և Ռուսաստան: Նկատի ունենալով, որ Եվրոպական երկրների հետ Իրանի ցամաքային առևտրի մեծագույն մասը իրականացվում է Թուրքիայի վրայով, Հայաստանը կարող է դառնալ այդ առևտրի համար այլընտրանքային ճանապարհ: Պատահական չէ, որ Հայաստանի հետ Իրանի հարաբերություններում ռազմավարական կարևոր ուղղություններից մեկը կոմունիկացիաների և հաղորդակցության ճանապարհների զարգացումն է: Քանի որ Իրանը Անդրկովկասի հետ կապող Թավրիզ-Ջուլֆա-Երևան-Թիֆլիս երկաթուղին արդեն տարիներ է, ինչ չի աշխատում, Իրան-Եվրոպա գծով բեռնափոխադրումներն իրականացնելու համար ԻԻՅ-ը հաջողությամբ օգտագործում է Սեդրի-Երևան ավտոմայրուղին, որի վերակառուցման աշխատանքներին Թեհրանը մասնակցություն ցուցաբերելու պատրաստակամություն է հայտնել: Մասնավորապես Իրանը ցանկություն է հայտնել մասնակցելու Քաջարանի թունելի կառուցմանը, որը նշանակալիորեն կկրճատի Սեդրի-Երևան ավտոճանապարհը և ծնունդ է առնում այն կղաթմնի անվտանգ:

Դեռևս 1992 թ., երբ Արաքս գետի վրա, Մեղրու Ագարակ ավանի դիմաց տե-

դադրվեց ժամանակավոր գինվորական նավակամուրջ (պոնտոնային կամուրջ), սկսվեց Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տրանզիտային անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ: Իդեալ, դա հնարավորություն տվեց Հայաստանին ճեղքելու իր ցամաքային ճանապարհների շրջափակումը և լուծելու դեպի արտաքին աշխարհ դուրս գալու կենսական նշանակություն ունեցող խնդիրը: Իսկ երբ 1995 թ. շահագործման հանձնվեց Արաքսի վրա համատեղ կառուցված մշտական կամուրջը, Հայաստանի տարածքով Իրանի միջազգային տարանցիկ բեռնափոխադրումները դարձան ավելի ինտենսիվ:

Հայ-իրանական հարաբերությունների զարգացման դեռ արշալույսին՝ 1992 թ. համատեղ ծրագրեր մշակվեցին նաև Իրանը Հայաստանի հետ կապող երկաթգծի շինարարության վերաբերյալ: Ընդ որում նկատի էր առնվում այն հանգամանքը, որ նույնիսկ Հայաստանի երկաթուղիների ապաշրջափակման դեպքում նախագծվող երկաթուղագիծը կարող է հանդիսանալ այլընտրանքային և մեկընդմիջտ լուծել Հայաստանի տրանսպորտային շրջափակման հարցը իր հարևանների կողմից:

Միանգամայն ակնհայտ է, որ երկաթուղային այդ ծրագրի իրականացման դեպքում Հայաստանը հնարավորություն կստանա իրանական երկաթուղային ցանցի օգնությամբ մուտք գործել դեպի հուսալի կոմունիկացիաները և դուրս գալ «լայն աշխարհ», մասնավորապես դեպի Պարսից ծոց և Միջին Ասիա: Դրանով Իրանը ևս լուծում կտար իր հեռահար նպատակներից մեկին՝ ստեղծել Սև ծովի ավազանին և ԱՊՀ երկրներին կապող կոմունիկացիաների մի ցանց⁹: Կասկածից վեր է, որ այդ հարթության վրա Հայաստանի դերն ու նշանակությունը Իրանի համար որպես կամուրջ դեպի հյուսիս և արևմուտք, կարող է եսպես բարձրանալ և դառնալ որոշիչ գործոն երկու երկրների տնտեսական և աշխարհաքաղաքական համագործակցության ամրապնդման համար:

Իհի՞շ կարևոր նշանակություն է տալիս նաև ՀՀ հետ օդային հաղորդակցությունը զարգացնելու հարցին՝ դա համարելով ռազմավարական և տնտեսական առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր:

Հայաստանը Իրանի համար կարևորվում է նաև էներգետիկայի բնագավառում նրա մշակած հեռահար ծրագրերը իրագործելու ասպարեզում: Դեռևս 1995 թ. Իրանի և Հայաստանի միջև ստորագրվեց միջկառավարական համաձայնագիր Իրան-Հայաստան գազամուղի շինարարության վերաբերյալ, որը ենթադրվում էր շարունակել դեպի Վրաստան և այլ երկրներ: Անկասկած, այդ նախագծի իրականացումը հնարավորություն կտա Իրանին Անդրկովկասում ձեռք բերել ազդեցության հավելյալ լծակներ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այդ գազատարը նրա համար կարող է հանդիսանալ էներգետիկ անկախության կարևորագույն գործոն: 1995 թ. ստորագրվել է նաև միջկառավարական համաձայնագիր Արաքս գետի վրա համատեղ ջրամբարտակի և հիդրոէլեկտրակայանի կառուցման վերաբերյալ:

Իրանն անշուշտ որոշակի ռազմավարական նպատակներ էր հետապնդում նաև՝ կառուցելով Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը, որը շահագործման հանձնվեց 1997 թ.: Ենթադրվում էր, որ այդ գիծը կշարունակվի նաև՝ դեպի Վրաստան, որը սակայն տեղի չունեցավ թբիլիսիի կողմից մերժման պատճառով: Առհասարակ պետք է նշել, որ Իրանի էներգետիկ բնագավառի այդ և նման ծրագրերը, մեղմ ասած, արժանանում են մի շարք պետությունների կտրուկ բացասական վերաբերմունքին:

Իրանը սերտորեն համագործակցում է Հայաստանի հետ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում՝ այդ համագործակցությունից քաղելով որոշակի օգուտներ: Քիչ չեն նաև այն փաստերը, երբ Իհի՞շ օգտվել է հայ Սփյուռքի աջակցությունից՝ Արևմուտքում իրանապաստ իմիջ ստեղծելու համար: Հայտնի է, որ Իրանը բազմազգ պետություն է և շատերին հրապուրում է նրա ապակայուն-

նացումը էթնիկական հողի վրա: Դա առաջին հերթին վերաբերում է Իրանի թյուրքալեզու ժողովուրդներին: Ուստի, ի դեմս Հայաստանի, Իրանը տեսնում է հուսալի դաշնակից թյուրքական նացիոնալիզմի, ինչպես նաև համաթյուրքականության կամ պանթյուրքիզմի դեմ: Միանգամայն ակնհայտ է, որ թյուրքական նացիոնալիզմի պոռթկումը կարող է ուղղակի ներգործություն ունենալ Իրանի թյուրքալեզու բնակչության վրա¹⁰, որի թիվը, ըստ որոշ տվյալների, ներկայումս հասնում է մոտ 20 միլիոնի: Ուստի, Իրանի քաղաքական շրջաններում քիչ չէ այն մարդկանց թիվը, որոնք գտնում են, որ «Իրանի և Թուրանի» պայքարը ոչ միայն չի ավարտվել, այլև գնում է դեպի սրացում, և Իրանը պատմական առաքելություն ունի համաթյուրքականության դեմ պայքարում: Գաղտնիք չէ, որ ժամանակ առ ժամանակ Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները, իսկ ավելի հաճախ ադրբեջանական ազգայնական կուսակցությունները առաջ են քաշում «Միացյալ Ադրբեջանի» կամ «երկու Ադրբեջանների» միավորման հարցը՝ նկատի ունենալով Իրանական Ատրպատական ու Ադրբեջանի Հանրապետությունը¹¹: Նրանք Ատրպատականը հայտարարում են Իրանի կողմից «բռնազավթված տարածք» և կոչ են անում ազերիներին՝ համախմբվել այն ազատագրելու համար¹²:

Թեհրանը անհանգստանում է, որ հարմար առիթի դեպքում ինչ-ինչ ուժեր կարող են թյուրքական նացիոնալիզմն օգտագործել երկրի կայունությանն ու անվտանգությանը սպառնացող գործունեություն ծավալելու համար: Այդ պարագաներում Հայաստանը, որը մշտապես հանդիսացել է թյուրք ռազմաշունչ նացիոնալիզմի զոհը, կամա թե ակամա հանդես է գալիս որպես Իրանի դաշնակից, պանթյուրքիզմի վտանգի դեմ: Ընդհանրապես ի պատիվ իրանական կառավարության, պետք է նշել, որ այդ երկիրը ներկայումս վարում է բավականաչափ հավասարակշռված ազգային-էթնիկական քաղաքականություն: Այսօր Իրանի ցանկացած բնակիչ իրեն զգում է նախ և առաջ որպես էթնիկական իրանցի և ոչ թե պարսիկ, ազերի, բելուջ և այլն: Ընդ որում, Ատրպատականի ազերի բնակչությունն իր հոգեկան կերտվածքով, հայրենիքի մասին իր մոտեցումներով և այլն, եսպես տարբերվում է Ադրբեջանի Հանրապետության ազերի բնակչությունից: Նա իրեն համարում է համաիրանական քաղաքական ընդհանրության անբաժանելի մասը: Հետևաբար, Իրանի տարածքային քայքայման հավանականությունը, որի վրա պնդում են որոշ քաղաքագետներ, չենին է, որովհետև բացի մի շարք այլ գործոններից, այդ երկիրն ունի պետականության ու կառավարելու բազմադարյան ճկուն ավանդույթներ:

Կասկածից վեր է, որ Իրանը խանդով է վերաբերվում Հայաստանի եվրաստլանտյան ուղղությամբ կապերը խորացնելու քաղաքականությանը: Թեհրանը մտահոգ է նաև այն բանի համար, որ Արևմուտքը մտադիր է տարածաշրջանի և Իրանի միջև բաժանարար գիծ քաշել:

Հայաստանը թերևս Հարավային Կովկասի այն միակ հանրապետությունն է, որը կարևորում է Իրանի ներգրավվածությունը Կովկասում և համարում է, որ տարածաշրջանում կայունության որևէ համակարգի ստեղծումը ամբողջական չի լինի առանց Իրանի մասնակցության և նրա շահերը հաշվի առնելու:

Ինչպես հայտնի է, Իրանը Հայաստանի հետ իր ռազմավարական շահերը զարգացնում է նաև առևտրի ու տնտեսության բնագավառներում: Հայաստանն Իրանական ապրանքների իրացման համար խիստ բարենպաստ շուկա է: ԱՄՆ-ի կողմից շրջափակման մեջ գտնվող երկրի համար, բնականաբար, արտաքին շուկաների հարցը ստանում է առաջնակարգ կարևորություն, առավել ևս, որ իրանական ներքին շուկան արդեն ձեռք է բերել կրիտիկական զանգված և կարիք ունի արտաքին շուկաների: Սակայն պետք է խոստովանել, որ տնտեսության ու ներդրումների բնագավառում Իրանի հաջողությունները Հայաստանում բավականին համեստ են, որը բացատրվում է տարածաշրջանի տնտեսական զարգացման խոշոր նախագծե-

րի ինվեստավորման բնագավառում նրա սահմանափակ հնարավորություններով: Ուստի, ԻԻՀ և ՀՀ տնտեսական հարաբերությունները դեռևս գերազանցապես սահմանափակվում են առևտրի շրջանակներում, և գոյություն չունի լայնամասշտաբ արտադրատնտեսական համագործակցություն արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության բնագավառներում և առհասարակ բացակայում է ինտեգրացման գործընթացը: Կասկածից վեր է, որ մեր երկու երկրների համագործակցության իրավական դաշտը ևս կարիք ունի հետագա կատարելագործման:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը, ցանկանում ենք նշել, որ Հայաստանի Հանրապետությունն Իրանում ունի բարձր վարկանիշ և պետական հեղինակություն:

Ներկայումս երկու երկրներն էլ կանգնած են զանազան մարտահրավերների առջև: Աշխարհն ապրում է իր պատմության շրջադարձային պահը: Գլոբալացումն արագ տեմպերով ընթանում է առաջ: Ձարգացման ընթացքն այնպիսին է, որ բացառված չէ, որ մոտ ժամանակներում աշխարհը փոխվի մինչև անճանաչելիության աստիճան: Սակայն, նկատի ունենալով, որ Հայաստանը և Իրանը ունեն մի շարք ընդհանուր, կամ իրար չափազանց մոտ երկրաքաղաքական շահեր, անկախ նրանից, թե ինչ է կատարվում աշխարհում, Հայաստանի պետական շահը պահանջում է Իրանի հետ պահպանել կայուն ու պինդ, ավելին, բարեկամական հարաբերություններ: Քաղաքական այդ եզրահանգումն անցել է պատմական փորձաքննության տևական մի շրջան և ունի իր համոզիչ ու կուռ տրամաբանությունը:

Գրականություն

- 1.Россия и Закавказье: реалии независимости и новое партнерство, под редакцией **Р. М. Авакова** и **А. Т. Лусова**, М., 2002.
- 2.**Малышева Д. Б.** Турция и Иран в борьбе за влияние в Закавказье // Россия и Закавказье: поиски новой модели общения и развития в изменившемся мире. М., 1999, с. 47-48.
- 3.**Гаджиев К.** Геополитика Кавказа, М., 2001.
- 4.**Herzig Edmund:** Iran and the Former Soviet South. London, The Royal Institute for International Affairs, 1995, p. 2.
5. **Fuller Graham.** The Center of the Universe: The Geopolitics of Iran. Boulder, Co Westview Press, 1990, p. 17-24.
6. **Svante Cornell.** Iran and the Caucasus. Sweden, Upsala University, 1998.
7. **Доктор Аббас Малек.** Иран и Туран: к вопросу об отношениях Ирана с государствами Центральной Азии и Закавказья. - "Центральная Азия и Кавказ", 5(17), 2001, с. 114.
8. **Oliver Roy.** The Iranian Foreign Policy Toward Central Asia. Tauris, 1999.
9. **Fuller Graham E.** Turkey Faces East, New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union. Santa Monica, CA: Rand. 1999, p. 45-46.
10. **Доктор Аббас Малек.** Иран и Туран, с. 115.
11. Azerbaijan-Iranian relations. Far Center Monitoring Group, Baku, 1996.
12. **Քայրորդյան Վահան,** Իրան-Ադրբեջան. հարևաններ թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, - «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. XXII, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2003: